նագրական օրինաց վերաքննութեան կենսական խնդիրներուն անհրաժեշտ ստիպողականութիւնը յայտնելով անոնց ալ անյապաղ կարգադրութիւնը յանձնարարեց ժողովին։

Ի վերջոյ պատրիարքական ծանր, փափուկ և բազմազբաղ պաշտօնն ըստ արժանւոյն վարելու մասին իւր անձնական տկարութիւնն արգելք ցուցնելով՝ խնդրեց որ երեսփոխանութիւնը նոր Պատրիարք մ՚ընտրէ իրեն տեղ։

Այս առաջարկութիւնն համայն երեսփոխանաց դժգոհութիւն պատճառելով, միաձայնութեամբ չընդունուեցաւ։

Յետոյ Ռուսինեան էֆէնտիի ատենապետութեամբ առժամանակեայ դիւան մը կազմուելով, խնդրոց կարգին համեմատ նախընթաց նստին ատենագրութիւնն և մայրաքաղաքիս մի քանի թաղերուն մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւնները վաւերացան։

Դիւանը Քաղաքական ժողովոյ կողմէ եկած զիր մը կարդաց, որով Քաղաքական ժողովն իր համարատուութեան տեղեկագիրը պատրաստած ըլլալը ծանուցանելով կը խնդրէր որ մինչև ներկայ ամսոյս վերջը նոր Քաղաքական ժողով մ՚ընտրուի, որպէս զի իւր հրաժարմամբն ազգին վարչական գործերն երեսի վրայ չմնան։

Յետոյ մայր դիւանին կազմութեան խնդիրը ձեռք առնուելով, անմիջապէս կատարելու կամ ութ օր յետաձգելու վրայ բաւական վիճաբանութիւն եղաւ, և որոշուեցաւ որ անմիջապէս կատարուի, բայց քառորդ մը դադարում՚ ըլլալով, նոյն միջոցին երեսփոխաններէն շատեր մեկնեցան և այս պատճառաւ ժողովն իւր կանոնական մեծամասնութիւնը կորսնցնելով չկրցաւ պէտք եղած քուէից թիւը կազմել հետևաբար մայր դիւանին ընտրութիւնն յաջորդ նստին մնաց, որ գալ ուրբաթ օրը պիտի գումարի։

Մասիս.

ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԴԻՒԱՆ.

Երէկ (Մայիս 9 – Ազգային Ժողովն) իր Բ. Նիստնրբաւ ի Ղալաթիա ի Ներկայութեան 43 երեսփոխանաց։

Ըստ Ներքին կանոնագրութեան ատեանը բացուեցաւ և նախընթաց նիստի ատենագրութիւնը ընդունուելէն ետքը՝ Իւսկիւտարի Եէնիմահալէի Թաղէն և Կարնոյ ու Եւդոկիոյ գաւառներէն ընտրուած երեսփոխանները վաւերացան։

Յետոյ օրակարգին անցնելով ընտրուեցան

Ստեփան փաշա Ատենապետ		քուէ	29
Ռուսինեան էֆ. դերատենապետ		.	23
Քրիստոսատուր ,,	,,	.	20
Այուազեան ,,	Ատենադպիր Ա.	.	31
Գարեգին ,,	,, Բ.	.	18
Պառնասեան ,,	,, Գ.	.	14

Ատեանը վերցաւ 15 օրէն գումարելու պայմանաւ։

Մասիս.

ՍՈՎ. ԵՒ ՏԱՌԱՊԱՆ-ԲՆ.

Տակաւին ծանրացած է սովը փոքր Ասիոյ վրայ, կշարունակէ իւր աղէտքը, և գաւառներէն հասած վերջին տեղեկութիւնք տխուր են և տրտմալի։

Տակաւին բազմաթիւ ազգայինք օգնութեան աղաղակներ կբարձրացուցնեն, և զգայուն հոգիներն կխռովին։

Եօզղատ՝ դեռ ևս կտագնապի, համաձարակ հիւանդութիւնք և չքաւորութիւնը սովուն կյաջորդեն։ գարնան եղանակին հետ բերքերն կուշանան, և ժողովուրդը ձեռնտուութեան կարօտ կըլլի։

Այս վիճակին թեմերէն մասնաւորապէս Էրզրէք, Սըվազն և Կիկի գիւղօրէից բնակիչք արդէն աղքատիկ՝ այս աղէտին երեսէն բոլորովին կը չըքանան գրեթէ, և հազարէն աւելի ազգայինք թըշուառութեան կմատնուին։ Մերձակայ Նալըխան գիւղը իւր 150 տուն հայ բնակիչներովն աղետից ներքև կհիծէ, և անցեալ տարուան վրայ հացը թէև դիւրագին՝ բայց հասարակութիւնը զայն ստանալու համար ոչ դրամ ունի, և ոչ գոյք՝ վաճառելու, և ստանալական կթափառի խոտաբուտ մնանելու համար։

Եւդոկիոյ մէջ, ամենէն աւելի կարօտ 321 հայ ընտանիք թէև նպաստ ընդունած են, սակայն այս նպաստը հազիւ քսանի մ՚օր զանոնք կրցած է սփոփել, և վաղանցուկ բարուքում՝ մը յառաջ բերելէ ետև՝ ժողովուրդը մի և նոյն թշուառութեան մէջ ինկած է։ ինչպէս նաև նոյն վիճակի թեմերէն Զիլէ, որ աղքատութեամբ կտառապի և օգնութիւն կը հայցէ։

Առաւել վշտագին և ողբալի կացութեան մէջ կգտնուի Պոլէճիկ՝ իւր շրջակայ Ասարլրգ, Մուրատչայ, Զաղարայ, Թիւրքմէն, Նոր գիւղ, և Կէօլտաղ գիւղերովն։ Մահուան վտանգն անխուսափելի դարձած է՝ եթէ գթութիւնն իւր փրկաւէտ ձեռքերն չկարկառէ անոնց։ Այդ կողմերն փախստական քանի մը սովաբեկեալք տեսնուեր են մայրաքաղաքիս մէջ՝ օգնութիւն ստանալու։

համար և յարտասուս շարժեր են զիրենք տեսնողները։

Քոնեայի մէջ տարապայման սղութիւն կտիրէ, և սովն այն կողմն ևս ինչպէս նաև Ափիոն—Կարահիսարի մէջ, տակաւ առ տակաւ ծանրանալով՝ սպառնալից կերպարանք մը կառնու։

Կեսարիա իւր շրջակայքն դեռ ևս փրկուած չէ այս աղէտէն, և կոտորապի իւր բազմաթիւ սովեալներովն։ Մանաւանդ Տէնտիլ, Կէմէրէկ և Զամանդի նահանգի գիւղերն յորս յետին աստիճան թշուառութիւն և աղքատութիւն տիրած են։

Ամասիա՝ մէկ կողմէն անձկութեամբ տառապած առեն, միւս կողմանէ՝ քաղաքը ոռոգող գետն յորդելով, տուն արտ ու այգի կողոպէ, կքանդէ և հարիւրաւոր ընտանիք մնիրոյ վրայ կնստին։ Իսկ շրջակայ գիւղերէից մէջ մանաւորապէս Հաճի գիւղ՝ ողորմելի վիճակ մը ունի. 350 ընտանիքէն 52-ը հազիւ կարող կգտնուին իրենց ոգեպահիկն հայթայթել, իսկ մնացորդ 300 տունը սովալեկ կտառապին, և շատեր մահուան դէմ ապաստան կխնտռեն կրօնափոխութեան մէջ։

Ասդին, Նիկոմիդիոյ քանի մը շրջակայ գիւղերն ալ, որք են Ղուրսպէկէն և Դընճրլար՝ փոքր առ փոքր կսկսին մանանկցիլ Ասիոյ աղետից։

Այս աղետալի վիճակին վրայ՝ հարկաւ մանրաման տեղեկութիւններ հասած են առ մեծարգոյ մանաժողովն հանդանակութեան։ Գոհութեամբ կլսենք, թէ կշարունակէ իւր անձնուէր ջանքեր՝ նոր օգնութիւններ հասուցանելու համար։

Մանաժողովն արդէն կարօտ գաւառներն փութացուցեր է՝ ի վերջոյ հաւաքեալ 680 լիրայի գումարն ալ, բայց այս ևս խիստ անբաւական ըլլալով՝ նպաստի և օգնութեան անհրաժեշտ պէտք կայ, և հետևաբար՝ բարեսիրտ ազգայնոց օժանդակութեան կսպասուի դէտակն։

Փունջ, թիւ 981, Մայիս 5.

ՑՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻ ԱՑՑԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ցունաց Սրբազան Պատրիարքին՝ անցեալ կիրակի օր Գումգարու մեր Ս. Պատրիարքին այցելութիւն մը տալէն յետոյ, հանդիսաւոր կերպիւ Մայր եկեղեցի իջնելով բեմին վրայ արտասանած յունարէն բանախօսութեան հայերէն թարգմանութիւնն է հետևեալը, զոր հարկ կը համարիմք հրատարակել։

«Սիրելի եղբարք և որդեակք ի Տէր։

«Ինչպէս որ բազմիցս բնութեան սերտ և զօրաւոր կապերովը կապեալ ընտանիքի մ՝ անդամոց մէջ անակնկալ դէպքեր ծագելով՝ պատճառ կըլլան ցրտութեան և վիճից ատիճներու, որք փոխադարձ ատելութեանց և կռուոց կը յանգին, նոյնպէս և զՏէրն Յիսուս առաքնորդ և հիմնադիր խոստովանող ընկերակցութեան մէջ, որ է Սուրբ Եկեղեցին Քրիստոսի, ինչպէս ծանօթ է, ժամանակաց բերումը, խիստ բազում խնդիրներ արտաքրեց, զորս խաղաղութեան թշնամի երկպառակութեանց և խռովութեանց փոխարեց ի մէջ մի տէր, մի հաւատ, և մի մկրտութիւն ունեցողաց։

«Բայց որովհետև, սիրելիք, Հայկական եկեղեցին կը կապակցի մերոյնոյն հետ ոչ միայն նախնի պատմութեամբ և հոգևոր յարաբերութեամբ, այլ նաև ժամանակային գիպուածոց և պատահարաց նոյնութեամբն, և նա մանաւանդ այժմ Սուլթան Ազիզ Խան արքային մերոյ հովանաւորութեանը ներքև զարգացման և եղբայրական սիրոյ ասպարիզին մէջ ընթանալու մասին մեր երկաքանչիւրոյն ունեցած ըղձից նմանութեամբն, ուստի փոխադարձաբար նուիրական և անհրաժեշտ պարտականութիւն ունիմք երկաքանչիւրս՝ երկու քոյր եկեղեցեաց բարեկամական յարաբերութիւնները մշակելու, և ամենայն մտերմութեամբ՝ նոցա մաղթելի և ըղձալի համամտութիւնն ու միութիւնը պատրաստելու։ Վասն զի թէ և ստոյգ է թէ «Ոչ է մեզ գիտել զժամս և զժամանակս զոր Հայր եդ յիւրում իշխանութեան»՝ սակայն ոչ սակաւ անդիմաբանելի է մեր գործակցութեանց անհրաժեշտ ըլլալն ընդ հուպ յաջողութեան գործին միութեան, որոյ հարքն մեր խիստ փափաքեցան՝ բայց չ՝արժանացան։

«Յարատևենք ուրեմն, սիրելիք, յարատևենք երկաքանչիւրս բառնալու մեր մէջէն մնացեալ խոչընդոտները և փրկարար եկեղեցական միութեան ճանապարհն հարթելու։

«Եւ Աստուածն խաղաղութեան, որ եհան ի մեռելոց զՀովիւն հօտից զմեծն՝ արեամբ յաւիտենական ուխտին, զՏէրն մեր Յիսուս, հաստատեսցէ զմեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա, և արասցէ ի մեզ զհաճոյս առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս ամէն»։

Ցունաց Սրբազան Պատրիարքին ըրած վերոյիշեալ յորդորական բանախօսութեանը մէջ դիտու-